ausl. 10-5 gp.

Արամ Ա
542-1
-20

Գ. ՄԱՀԱՐՈՒ

ԲԱՐՈՒԽԵՐԸ

377

ՅԵՐԵՎԱՆ—1927

891.98
ԸՆԹԵՐՑԱՍՐԱՆ
891.99
Մ-19

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՇԱՐԻ

ՊՈԵՄՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Школьная библиотека
7/XI. 1922
Библиотека Армянского Педагогического Института

ԵՐԵՎԱՆ — 1927

Գրառեպվար № 80 (Բ). Տիրաժ 500

Պետհրատի յերկրորդ տպարան, Յերևանում—217

ԲԱՐԴԻՆԵՐ

ԱՌԱՎՈՏ

Հեռու հունդում են խանդուն հանդերը,
Անթիվ հատիկներ ճայթում են հողում,
Արեվածագը կարմիր հագել է,
Ու կարմիր շորերով շողում։

Մշուշնե՛ր, մշուշներ ծանրաթեվ, դառնաթով,
Մշուշներ դարանած ծորում ու հովտում,
Ու յեզներ բառաչող, ախ, յեզներ արնաթոր,
Ու համաճարակ սպիտակ հոտում...։

Բայց յելնող նոր ուժը մի խրամ հաղթել է,
Մոտենում է հաստատ ու ահեղ շողում —
Ահա հունդում են խանդուն հանդերը,
Յեվ անթիվ հունդեր ճայթում են հողում...։

ԴԱՇՏԵՐԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ

Տեսնում եմ դեմքդ չուգունե,
Քայլերդ յեկաթածանր,
Գիշերը դանդաղ շոգում է
Ձրերի վրա բարձրացած։

Գալիս ես, գալիք իմ, յեվ ահա
Դուխում ես հողի թմբերին,
Քայլում ես դաշտերի վրա,
Արտերի կողքով անբերրի։

Զգում եմ այնքա՛ն մոտիկ,
Վոր կարծես յեղբայրս ե ծիավոր,—
Նա, մեջքին ալ կարմիր գոտի
Արշավում ե դեղին դաշտերով։

Սպասում, սպասում եմ յես քեզ,
Գյուղաստան յերկրիս հետ միասին,
Մութ գոմում բանդարկված խոյի պես,
Կարոտում եմ հզոր քո լույսին։

Զայնո՛ւմ ես դաշտերի մուժից,
Այդ դու յես քո նոր յերգերով,
Յես տեսնում եմ բարձրացող փոշին,
Տեսնում եմ տալիս ես զրոհ։

Յեվ զգում եմ այնքան մոտիկ,
— Յեղբայրս, յեղբայրս ծիավոր,
Կապել ես ալ կարմիր գոտի
Արշավում ես դեղին դաշտերով...։

ՓՇԱՏԵՆԻ

1

Տեսել ես շատ անգամ,
Տեսել շատերին,
Ճամբի յեզրին կանգնած
Փշատենի։

Նախիրներ ես տեսել,
Դեղին, թոզոտ,
Հոգնած հնձվոր ու սել,
Արտից դարձող։

Ու մնացել ես մենակ
Տխրությամբ ջինջ,
Յեկել, անցել են նրանք,
Քեզ ի՞նչ, քեզ ի՞նչ...։

Կելնի արևը հրակ
Ու կիջնի կույր,
Մոխրահեր ու մռայլ
Կը մնաս դու...։

Դու կը ծգվես լուանին
Ծաղկուն ու նայ,
Յերբ լեռների ուսից
Բարձրանա նա։

Ու կը նայես նրան
Սառն ու արթուն,
Կելնես մի վոտի վրա,
Կը պարես դու։

Դաշտում մեկը կը սրի
Մահու ուրագ,
Բայց կը պարես դու անվիշտ
Ու կենսուրախ...։

2

Փշատենի՛ անհույս,
Անհուշ իմ ծառ,
Ահա որեր անուշ,
Որեր պայծառ։

Իմ յերկրի հանդերում
Վոսկի հասկեր,
Կյանքը, կյանքը խնդուն
Վազք ե, վազք ե։

Վրնջացող ծիե՛ր
Խեուղու վրա,
Խփել ե արեվը
Նարնջի վրան.—

Յեվ դաշտերից մշուշոտ
Գծով ուղիղ,
Ահա գալիս ե շոգ-շոգ
Յերկաթուղին։

Ախ, փշատի՛ իմ թուփ,
Յերգ իմ վարդե,
Անծրեվի տակ ժպտուն
Վարդե՛ր, վարդե՛ր...։

ՅԵՐԿԻՐ

Յես ինձ յերգում եմ քո մեջ, յերկիր,
Իսկ քեզ—անկաշկանդ իմ հույզերում,
Յեվ դրանից չե՞ վոր իմ յերգը
Այսքան հորդուն և ու հոլծանուտ։

Դրանից չե՞ վոր ջերմ և շնչում,
Ինչպես կեսորվա այն քամին և –
Վոր չո՞ւ թռչում և դաշտերի միջով...
Յեվ այն, վոր խորն և, մարդկային և...»

Այս լեռնաստանի բավիղներում,
Ու մեր դաշտերում տրտմաթախիծ,
Ու գյուղերում մեր համր ու ներուժ,
Իմ յերգը անզոր ու կատաղի...»

Իմ յերգը պետք և լիներ դրոշ,
Լիներ սավառնակ կամ հրետանի,
Իմ որերի պես պարզ ու վորոշ,
Վոչ թե դաշտում ընկած քամի...»

Ու յես զգում եմ, զգում եմ, ո՛,
Տխրությունը քո՝ սրտին իմ մոտ,
Ու իմ հույզերում յերգուն ու նոր
Խարանվում ես դու վորպես ամոթ...»

Յերկի՛ր գյուղերի, պա՛կ հասկի,
Յեթե պե՛տք և քեզ անվերջ գովել
Յես ե՛լ կը գտնեմ վոսկի խոսքեր,
Խոսքեր վոր չունի վոչ մի պոետ...»

Յեվ մի՞թե այդ և քեզ հարկավոր,
Յեվ կարո՞տ ես դու նրան միթե,
Հաճույքին այդ խեղճ ու անկարող,
Ու խնդությանն այդ սին ու թեթեվ...»

. . . . . .

Հիվանդ և հոգիս քո ցավերով,
Յերկաթի՛ սերը տանջում և քեզ,
Կարոտս խորն և ու ավերող,
Իսկ քո թեվերին աթար ու դեզ...

Դեռ զորշ հյուղերն են քեզ գուրգուրում,
Ախ, այդ թախիծն և ինձ ողակել,
Ահա թե ինչու իմ յերգերը
Չեն կարող բարձր աղաղակել ...»

Յես շղթայված եմ քո ներկային,
Յերկի՛ր հյուղերի, սեր իմ վառման,

Դանդաղ սայլերին քո յերկանիվ,
Քո ջրին, հողին ու քո զարնան...։

Քո խո՛փն ե կիսել սրտիս հերկը,
Քո բույրն եմ շնչում մոտ ու ծանոթ...
Յեվ դրանից ե վոր իմ յերգը
Այսքան հորդուն ե ու հորձանուտ...։

ՆԱՎՀԱՆԳՍՏՈՒՄ

Մեր շոգենավը հզոր կողերով,
Ճեղքում եր ջուրը, ղեկը — իմաստուն.
Մենք յեկել եինք ափերից հեռու,—
Քեզ հանդիպեցի նավահանգստում...։

Դու կապույտ շորեր ունեյիր հագիդ,
Անվրդով՝ ծովի ջրերի նման.
Աչքերիդ—մո՛ւժը անկռիվ կյանքի,
Ու անո՛ւշ հանգիստ կոպերիդ վրա։

— Գնանք,—ասացի, —թովիչ ե ծովը,
Այնտեղ կռիվ կա, մահ ու հաղթանակ,
Յեկ ու ամրացիր ալայքարի բովում,
Շարքերում մեր կուռ ու յերկաթակամ...։

Դեռ շատ ճանապարհ ունենք գնալու,
Ու ծովը դեռ շատ վտանգներ ունի.
Յեվ մի՞թե, մի՞թե, քեզ չի՛ հմայում
Մեր հաղթանակի փոթորկոտ ուղին...։

Յեվ ի՞նչ ունես դու ափերում այդ քար,
Հանգստում այդ համր ու անհյուրընկալ.
Իսկ ծովը, ծովը—այնպես խելագար,
Այնքան իմաստուն ու այնքան հանկարծ...։

Ու դու նայեցիր ինձ լուռ ու հանգիստ,
Ախ, քո հայացքից լուռ մի վերք մնաց.—
Դու կապույտ շորեր ունեյիր հագիդ,
Անվրդով -ծովի կապույտի նման...։

— Շղթայված եմ յես այս հովիտներին,
Հավիտենական այս բախտից անզոհ,

Ու պիտի ապրեմ հրամանով վերին
Իմ անուրախ ու սրտամաշ կյանքով։

Յես պիտի ապրեմ մշուշում այս լուռ,
Այս հանգստում ու նավահանգստում,
Եվ վոչինչ ունեմ յես կյանքին տալու,
Կյանքն ել չի տվել ինձ վոչ մի խոստում,...։

Յես այգեպանի հնազանդ կինն եմ,
Իսկ նա դողում է իմ կյանքի վրա,
Ու դեռ կը դողա մինչեվ վոր ընկնեմ
Նրա խնամած նշենու նման...։

Սուլիչը սուլեց,—լսիր, ասում եմ,
Վոչինչ վոչինչ կա վորոշված վերուստ,
Յեկ դարձիր ծովի անսեր ցասումը,
Յեկ դարձիր մարտիկ, ընկեր ու հերոս...։

Կը հասնենք մի որ նո՛ր նավահանգիստ,
Կողջունենք նրա ափերը յերահ,
Կըզգանք բերկրանքը կոմունար կյանքի,—
Թքի՛ր հանգստիդ նշենու վրա...։

Յերկրորդ սուլիչը,—դու գնա՛,—ասիր,
Կարող ես դո՛ւ ել ուշանալ ծովից,
Յես շղթայված եմ այս կույր յերազին,
Հիշիր, վոր այստեղ մի դժբախտ թողիր...։

Իսկ յես կը հիշեմ, բանի վոր դեռ կամ
Քո հայտնությունը անգին ու բարի,
Յեվ այն, վոր ծովի թարմությամբ յեկար,
Յեվ իմ որերը անհանգիստ արիր...։

Գնա, շտապիր, ամուսինս ահա
Անհանգիստ ձայնով կանչում է, կանչում,
Գնամ, պատրաստեմ ընթրիքը նրա,—
Իսկ ինքնայնուը այրվեց անջուր...։

Յերրորդ սուլիչը—տեսնում եմ, անբառ,
Պարզում ես ձեռքդ թեթեվ յեվ քյուրեղ,
Դու թողիր, վոր քեզ գրկեմ ընքշաբար,
Ու թաց աչքերիդ մուժը համբուրեմ...։

Եվ մնաս բարով... —անհո՛ւշ նշենի,
Նավահանգստին շղթայված իմ սեր,
Մնացիր կապված հովտային շեմին,
Ինչո՞ւ իմ կանչին սիրտդ չլսեց...—

Շոգենա՛վն ահա ծովերի հանդեպ,
Ճեղքում է ջուրը, գնում է առաջ...
Ախ, կարող եյիր լինել դու ինձ հետ,
Բայց դու մնացիր, մենակ ու սառած...։

...Կը գան մակույկներ, կը գան նոր նորեր,
Նոր նոր ընկերներ, վորոնք ուշացան,
Դու միշտ կարո՛ղ ես հովիտը թողնել,—
Իմ սիրտը յերբեք քեզ չմոռացավ...։

Ու նոր-նոր հասնող մակույկների մեջ,
Յես քեզ կը փնտռեմ կարոտով ուժատ,
Իմ կորած ընկեր, շղթայված իմ սեր,
Հին հովիտների քնքշաթե՛ր շուշան...։

ՆԱՄԱԿ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ

Դուք թեզեր եք կարդում, կարդում եք թղթեր
Մարքսի, Լենինի կամ կյանքի,—
Ներեցեք, վոր ձեզ զրում է պոետը,
Ընկեր Ստալին։

Պոետը... դժվա՛ր նա ձեզ խելոք բան գրի,
Բայց, դե, նա չի յել կեղծի.
Մի բան կա նրանում վոր անքննի՛ն է,
Մի բան կա նրանում—գեղեցիկ...։

Յեվ այդ, հենց ա՛յդ է, ասել զգացա՛ծը,
Թեկուզ նա դրանից սպառվի...
Ների՛ր պոետի այդ անշահ հանցանքը
Ընկեր Ստալին...։

Ազնիվ խոսք, նա շատ, շատ ուրախ կը լիներ
Թե ծնվեր Բակունց կամ Բուխարին,—
Բայց կարծեմ այդ հարցն ել քիչ անքննի՛ն է,
Ջ՛խփեմ ուղեղս քարի...։

Ախ, ընկեր Ստալին, շատ շատ ամաչում եմ,
Բայց դե՝ չեմ կարող չգրել,—
Յես մեկին սիրեցի, սերը անհաջող եր,
Ֆրոնտս պարտություն կրեց ...։

Արջի պես վոռնացի, շատ ափսոսացի,
Զզվեցի կյանքից ու մարդուց.
Ասացի,—ինձ պետք չի վոչ կյանք, վոչ սոցիալիզմ
Նրան կորցնելուց հետո...։

Հետո, դե, հետո հավաքեցի ինձ,
(Ինձ համար այդ ել մեծ բախտ եր մի...)
Թող կորչի, ասացի, տխրություն ու կսկիծ,
Ո՞վ եր նա, մի թույլ բաղբենի...

Մուծեցի՛ բաց թողած անդամա-վճարները,
Գործերիս կարգի գցեցի,
Թողի խմելը, անգործ թափառելը,
Ու դարձա խելացի ծի...։

Վերջացա՞վ խնդիրը, ախր վո՞նց վերջացնել,
Վրանգե՞լն եր, Դենիկի՞ն, Կոլչա՞կ կամ,
Ախր վո՞նց յես հիմա ձեզ հասկացնեմ
Նրա թովքը կնոջական...։

Ախ, ընկեր Ստալին, յես ձեզ խոստանում եմ
Լինել պարտքերիս գիտակ,
Կատարել ինձ ընկած պարտականությունը,
Գործերիս մեջ լինել շիտակ ...։

Միայն ներեք ինձ, վոր նրան սիրում եմ,
Վոր մոռանալ նրան չեմ կարող,
Վոր յերգում եմ անմեռ, անմոռա՛ց իմ սերը,—
Անուրախ ու անուշ կարոտ...։

Հիմա դուք նստած մեծ նավի ղեկի մոտ
Վարում եք ВКП(б)-ն,
Իսկ յես ձեզ դիմում եմ վորպիսի՛ յերգերով,
Յես վորքան փչացա՛ծ եմ դեռ...։

Ո՛, յես շատ կուզեյի վոր ձեզ պես, ձեզ պես
Տեսնեյի կյանքը, զգայի,

Ինչ տխո՜ւր է վոր յես պոետ եմ անհամեստ,
Ընկեր Ստալին...։

Եվ ինչ, ինչ գրել, ասացի՛ ուղղամիտ
Ինչ սրտումս կա՛ր ամբարած,—
— Ախ, եթե՜ լինեյի Բակունց կամ Բուխարին,
Ախ, յեթե՜ լինեյի յես մա՜րդ...։

ՔԱՌԱՍՈՒՆՔ

I

Մեծանիստ ու հարուստ ե Եջմիածնի վանքը,
Ու դարերի ամբակը չի՛ մաշել նրան,
Հանդիսավո՛ր ե այնտեղ, դանդաղասահ ե կյանքը,
Ու կամարները զո՛րշ են, ու խորանները մռա՛յլ...։

Եջմիածի՜ն մեծանիստ, ձեռակերտ ու քարակուր,
Քանի՜ դարեր կանչել են քո զանգերը ցնծուն,
Այգիներդ հոտավան, հոտեր ունես ճարակող,
Ու մառաններ լեցուն։

Հողվորի խուրն ես որոնել ու մեծատան արշինը,
Բաժանել ես ամենքին չեղած շնորքներդ,
Բաժանել ես այնքան շատ, կորցրել ես հաշիվը,
Բաժանել ես այնքան շատ, ու հոգնել ես...։

Քեզ ծերացած կարծեցի քո քարերի նման,
Քո քարերի նման անշունչ ու անհոգի,
Թվաց՝ անցյալ փառքից միայն մոխիր մնաց,
Վոր մեր սուր դանակը զրկեց քեզ քո թոքից...։

Թվաց վոր ընկար դու հազարամյա ուժից,
Վոր քո դողանջները ել չեն կարող ստել,
Թվաց վոր քեզ խեղդեց փլուզումի փոշին,
Վոր ուրվական դարձար ու դարձար սավեր ...։

Ու յերբ լսում եյի դողանջները զանգիդ,
Թվում եր այն տխուր թաղման մի ազդարար,—
Կատարում են ինչվոր մռա՛յլ հոգեհանգիստ
Ծերունիներ խարխուլ ու մի քանի պառավ...։

Ու հյուսվում եր կապույտ իրիկունը վանքիդ,
Նվում եր անձրևվը վորպես «տեր վողորմյա»...
Հետո փախչում եյին ծառազուրկ այն բակից
Աքաղաղներ թրջված ու մի քանի վեղար...։

Եջմիածին մեծանիստ, Լուսավորչի վանքը,
Վոր ապրում ես ու դեռ կաս, հնամենի՜ խրամ,
Տրոմաթախի՛ծ ես հիմի, դանդաղասահ ե կյանքդ,
Կամարներդ գորշ են, խրամներդ մռայլ...։

. . . . . .

Կես գիշերին անծրեվը սաստկանում ե,
Խոնարհվում են ծառերը պատարագի,
Ու շարական ե յերգում այն քամին ել
Քահանայի նման ծեր ու տարագիր...։

Ու շարական են յերգում թաց քարերը,
Ու խաչերը թեվաբաց ու վիրավոր,
Գմբեթները բարձրաբերձ կարկամել են,
Փաթաթվել են դառնահուշ մի խավարով։

Ու լսվում ե կիսալույս խուլ խցից մի
Կիսախեղդ ու արյունոտ դառն մի ճիչ,
Ստվեր մի մոտենում ե պատուհանին,—
Սեվաագետ ու սրբալույս պատարագիչ...։

Նորընծա մի աբեղա կիսախռիվ
Գրկել ե մի աղջկա մանկահասակ,
Վորբ եր նա ու փախել եր չար անծրեվից,
Վորբ եր նա չուներ վոչ տուն, վոչ հարազատ...։

... Ստվերը հետեվում ե սեվ այդ գործին,
Ու միրքից վար ե հոսում թաց մի հեշտանք,
Իսկ հետո... մարում ե թույլ լամպը խցի,
Խավարում քրքջում ե սեվ մի հրեշտակ...։

Խավարում պար են բռնել մերկ աղջիկներ,
Գալարվում ու խփում են բաց գիսաերին։
Զրհորդանը յերգում ե «չիկի-չիկի»,
Իսկ քամին նվում ե ցուր ու հիսաերիկ...։

Նվում ու ծվատո՛ւմ ե թուփ ու մացառ,
Խաչերը քրքջում են չոր ու ահույս...—
Լռություն...—ու կամարի տակով անցան
Մի, պոռնիկ, մի մեռած վորբ ու մի Հիսուս...։

II

Հարուստ ու մեծանիստ է Էջմիածնի վանքը,
Ու դարերի ամբակը չի՛ մաշել նրան,
Այն որ հիմքից շարժվեց նրա անզոր կյանքը,
Այն որ նոր փայլ հագան քարեր ու խորան։

Այն որ քաղաքներից ու գյուղերից անկամ
Յեկան հազար հազարներ մեռոնեփների,
Յեկան հայեր Յեվրոպից, Հնդկաստանից անգամ,
Ու վորոտաց վանքը հիմքից...։

Յեկան քաղքենիներ, տիկիններ գեր ու լայն,
Խանութպաններ յեկան, յեկավ մուրացիկը,
Հավատավոր հոգվորներ, գյուղացիներ յեկան,
Ու հավատը՝ նրանց սիրած դրացի՛ն եր...։

Նվագներով յեկան ու հավատով հարբած,
Որորվեցին վանքի պարիսպները քարե,
Ու հարբեցին այնքան, մինչև նրանց թվաց
Վոր զառամած վանքն էլ «ուզունդարա» պարեց։

Կանգնեց թանձր փոշի այն քաղաքի վրա,
Ու նաղարան թնդաց ու ամբոխը հորդեց,
Հետո հոգնած մոան մեռելային մրափ,
Վոր զարթնեն վաղ ծեգին ու մեռոն յեփեն...։

III

Յես յերազով անցա վանքի դարպասից ներս,
Մշուշային փայլով այնտեղ շեմին նստած
Տեսա ծեր Հիսուսին ժպտուն ու լուսերես,
Յես մոտեցա նրան քայլերով վստահ...։

Բարևվեցի նրան, ու բարևվեց նա էլ, —
— Ճի՞շտ է վոր այդ դո՛ւ յես, վոր յեղել ես ու կաս,
Վոր քո խոնարհ հոտին զթությա՛մբ ես նայել,
Վոր յեղել ես անմահ, վոր յեղել ես զթած...։—

Հիսուս քաղաքացին նայեց խորո՛ւնկ թախծով,
Ինչպես քար հարցական, ինչպես մութ հանելուկ.
Իր հայացքում մշուշ ու տխրության մի ծով,
Այնքան սարսափահար ու այնքան հլու։

Ու յես տեսա՛, տեսա նա սեվ մշուշ հագավ,
Ու վեղա՛րը գլխին անհուսորեն գծվեց,
Տեսա իմ դեմ նստած ծերո՛ւկ մի վանական,
Մեղրամոմե դեմքով ու հագին սրեմ...։

— Իզո՞ւր հարցնում ես նա յեղել է թե չէ,
Կարեվորն այն է, վոր ապրում է հիմա,
Վորքան վոր ծեր ճառը բարձրաղաղակ հնչէ,
Այնքա՞ն դեռ նա կապրի, այնքան նա կը մնա...։

Ահա՛ հոտերը մեր վանքի պատերի տակ,
Փռված շուրջը լեի ու խուցերում մթին...
Ձեր վո՞ր, վո՞ր Մայիսին այսքան թափոր գտաք,
Մերը կաղնու անտառ, ձերը փոքրիկ թթի...։

— Ծերո՛ւկ, հիմար ծերուկ, մի՞թե դու չես զգում
Վոր հին ձեր այուները որորվում են արդեն,
Յերկրի սրտից յելած լուսավոր մի սերունդ
Ձեզ չի, չի՛ ճանաչում ու յերբեք չի հարգել։

Ծերուկ, դու չե՞ս տեսնում մեր պայքարը համառ,
Հաղթական մեր յելքը հողի, մարդու վրա,
Յեվ այն, վոր կռվում ենք գալիքների՛ համար,
Վոր առաջ ենք շարժվում խրամ առ խրամ...։

Մութ են խցերը ձեր, ձեր մտքերի նման,
Դուք չեք տեսնում որը, դուք չեք տեսնում կյանքը,
Այուներ ունեք անշունչ, քարեր մահամնա,
Խաչեր ծեռնակառույց ու այս մգլած վանքը ...։

Խավարո՛ւմ է ուժեղ իշխանությունը ձեր,
Խավարո՛ւմ եք ուժեղ ու արեվին ընդդեմ,
Կրգա արեվը մեր, հասկանո՞ւմ ես դու, ծե՛ր,
Ու ձեր խավար արքան անդարձ կը ցնդե ...։

Նա նայեց ինձ դաժան ու քրքջաց բարձր,
Ձեռքը խփեց ծնկին ու քրքջաց ելի,
Հետո բամի կանգնեց, փոշի հանեց թանձր,
Ու քրքջում եր նա փոշու, բամու բերնից...։

Ապա պարապի տակ սեվ ու հսկա մի շուն
Կաղկանձեց դառն ու խոր՝ շունչը հառած վանքին,

Մեկը ելում էր խուլ գիշերային մուժում,
Անհույս ու անհանգիստ...։

— Լսո՞ւմ ես այդ ձայնը...
— Այդ, բամի՛ն է ծերո՛ւկ...
— Ամեն ինչ քեզ համար քամու ձայն է յեղել,
Շուրջը տեսնում եք դուք փոքրաթիվ մի սերունդ,
Ու կաղնի՛ յե թվում, ինչ վոր սեզ ու յեղեգ...։

Այդ քո յերկրի ձա՞յնն է, նա՛ յե կանչում այդպես,
Դե փրկեցեք նրան մեր խաչերի ճանկից,
Դուք ջրով եք հարբել, սարքել տոն ու հանդես,
Ու պսակ եք դրել հիվանդ յերկրի ճակտին...։

Մենք կանք ու կը մնանք, բանի վոր այս յերկրում
Կա գետնափոր մի հյուղ, սակավահող մի ծեռք,
Մե՛նք ենք այս աշխարհի տառապանքը կրում,
Ոտա՛ր եք դուք այստեղ, ինչպես յեվ գործը ծեր...։

Ու մեզ մոտ են գալիս տնվորն ու անտունը,
Հողի մշակները, մուրացկանները՝ անգամ,
Նրանք մեզ սիրում են ու մեզ հավատում են,
Նրանցով ենք ուժեղ, նրանցով ենք կանգնած...։

Առավոտյան մեզ մոտ շքեղ տոն կը լինի,
Կը դողանջեն վանքի զանգակները հատակ,
Բազմահազար մարդիկ կապված մեր քար շեմին
«Խորհուրդ խորին» կերգեն վանքի կամարի տակ...։

Իսկ դուք, դուք գնացեք, տոնեք մայիսը ծեր,
Ու դրոշակներ կախեք, մաշեք սիրտ ու լեզու,
Դուք բանակներ ունեք, բահանանե՛ր մենք ծեր,
Ձեզ գիտություն ու զենք, իսկ մեզ չեղած Հիսուս...—

Դժվա՛ր եր ինձ համար լրջության հետ հաշտվել,
Ու յես ծիծաղեցի լիաթոք ու հնչուն,
— Մենք բանակներ ունենք ու յերկաթե՛ վաշտեր,
Մենք բանակներ ունենք ամբողջ աշխարհում։

Ախ, ախ, ցնդա՛ծ ծերուկ, կարծում ես թե ա՞յս է,
Վերջանո՞ւմ է կյանքը պարիսպներից ծեր դեն,
Կըգա՛ վերջնականը, կը գա ծեր որհատը,
Մի որ այս զանգերը ծեր վախճանը կյերգեն։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени Мясника
Ա. ԱՌՈՒՍՏԱՄԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ
А 76902
659

Ճի՛շտ է, ուժեղ եք դուք, ու դեռ յերկա՛ր, յերկար
Կը մնա ձեր թաթը մեր գյուղերի վրա,
Ձեզ հետ հաշտվում է դեռ մեր պայքարող ներկան,
Մի որ ինքնե՛րդ կընկնեք ձեր վանքերի դռան...։

Ուրի՛շ ուխտավորներ կիջնեն լեռներից վար,
Ուրի՛շ տոն կը լինի ճամբաների վրա,
Կանցնի այս ծմեռը ու կը վառվի մի ատառ,—
Բերքուն ու հուրհրան ...։

Յեվ այն հողագործը՝ վոր հավատում է ձեզ,
Խորթ չի՛ մնա նա յել գալիքների բոցին,
Մի որ, ուշ գիշերին կը լինի հյուրը ձեր,
Ու խորանի այունից կը կապե սեվ իր ձին . . . ։

Ու չե՛ք գտնի, ծերուկ, ու չեք գտնի կյանքում
Վոչ մի մթին քարայր, վոր ձեզ պատսպարի,
Ու ձեր դիակները կը մնան ծյան ներքո,
Հիսուսը կը ցնդի մեքենայի ծայնից...։

. . . . . .

Մոայլ յելավ վոտի, մի աքլոր զիլ կանչեց,
Յես նայեցի նրա դեմքին ծեր ու մաշած,
Յես նայեցի նրան ու կարծես նա, նա չեր,
Իմ դեմ լուռ կանգնել եր հողագործ մի մշակ։

— Ի՞նչ ես փնտռում այստեղ յեվ ինչու յես յեկել
Ի՞նչ ես ուզում մեզնից, գնա ու քեզ համար
Հյուսիր հաղթանակի կոպեկանոց յերգեր
Ու մեզ մի՛ մոտենա...։

Խո՛րթ ես դու մեր հողին, մրոքերդ խորթ ու սեվ,
Մենք չենք, մենք չենք լքի չեղած մեր Հիսուսին,
Յեվ ի՞նչ, ի՞նչ եք տալիս նրա փոխարեն մեզ,
Ինչո՞ւ եք դուք զրկում մեզ այդ չնչին հույսից ...։

Ազատեցե՛ք դուք մեզ մեր սայլից ու կամից,
Գետնափոր տներից ու ճանկերից կեղտի,
Շինեք մեր գյուղերում տնե՛ր յերկհարկանի,
Ու թող ձմրան բամին մեր ցուրտ թոներում չերգի...։

Ու քանի կա մի գյուղ հողաշեն ու խարխուլ,
Քանդված սայլի մասեր, աթար, հյուղ ու վոջիլ,

Քանի լղար վզեր գոժում ու փարախում,—
Դեռ Հիսուսը պիտի այդ հին գյուղում շրջի...։

Մենք մեր վերջին գառը կը նվիրենք վանքին,
Կը մորթենք մեր կովը նոա տաշած դռան,
Իսկ նա, ով կսպառնա նրա հանգիստ կյանքին
Գերանդիներո՛վ մենք կը խրատենք նրան...—

. . . . . .

Նա հեռացավ խռով ու յերբ հեռացավ նա
Տեսա պարզ ու վորոշ գիշերային մուժում,—
Վոր ծուլվել ե նրան, վոր տանում ե նրան
Վեղարավոր մի շուք...։

IV

Հետամնա՜ց իմ յերկիր, ահա՜ պատկերը քո,
Վրնջում ե Զանգուն անհնար քո վշտից,
Խեղճությունդ անծայր, ու թախիծը յերգող,
Քաղցրաձոխուր վորպես լուռ բուրմունքը մշկի...։

Այս վերելքի ճամբին, կարող ե վոր անգամ,
Մենք քար ենք տվել, յերբ դու հաց ես ուզել,
Բայց, լսո՞ւմ ես, ելի ուղիղ ե մեր ճամբան,
Նա կը հասնի մի որ մինչեվ սոցիալիզմը...։

Կը գա նոր մի սերունդ ռեզին, չուգուն հագած,
Կը խորտակի նրան, կը խորտակի կամա՛,
— Ո՛, վրնջուն գալիք, մեքենափայլ դու կամք,
Ո՛, հնամյա վանքերի համայնական մա՛հ...։

Ու թող քի՛չ աղմկեն ձեր զանգերը տամուկ,
Ու ծնծղաները վոր արդեն խշխշում են...։
— Հետամնաց իմ յերկիր, հազարամյա մանուկ,
Որորոցիդ վրա թող չհաջե շո՛ւնը...։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Инвент. Масниковян
Ա. ՄՅԱՍՆԻԱՆԻ ԱՆՎԱՆ

[1 n.]

891.99
Ս-19
Մեկ
օրինակ

ԳԻՆՆ Է 20 ԿՊԵՊ.

A II / 76902